

**Կառլոսյան երկրորդ պատերազմի արձագանքը
«Եվրոպա» շաբաթաթերթում**

Մովսիսյան Ֆելիքս

Հանգուցային բաներ. Իսպանիա, գահաժառանգություն, Ֆերդինանդ VII, Իզաբելլա II, դոն Կառլոս, Նարվաես, պատերազմ, կառլոսականներ, Կատալոնիա, Կարբերա

Նախաբան

1830թ. մայիսին Իսպանիայի թագավոր Ֆերդինանդ VII-ը հրատարակեց գործնական հրովարտակ, որով թագավորի՝ արու գավակ չունենալու դեպքում գահը կարող էր ժառանգել նրա ավագ աղջիկը: Թագավորի եղբայր դոն Կառլոսը, ով մինչ հրովարտակի հրապարակումը համարվում էր գահաժառանգ, ընդդիմացավ թագավորական նոր հրովարտակին՝ հայտարարելով այն անօրինական: 1833 թ. Ֆերդինանդ VII-ի մահից հետո գահաժառանգ հայտարարվեց նրա երեքամյա աղջիկ Իզաբելլան, որի դեմ ընդվզեց դոն Կառլոսը: Դա սկիզբ դրեց քաղաքացիական պատերազմի, որը 1833 թ. ավարտվեց կառլոսականների պարտությամբ:

1847 թ. Կատալոնիայում կառլոսականները կրկին գահակալման համար պայքար սկսեցին, որը չվրիպեց ժամանակի հայ պարբերական մամուլի ուշադրությունից: Կառլոսյան երկրորդ պատերազմը հանգամանակից լուսաբանեց Միլիթարյան միաբանների՝ Վիեննայում լույս տեսնող «Եվրոպա» շաբաթաթերթը: Արևմտահայ ազգային-պահպանողական այս պարբերականի դիրքորոշումը 1840-ական թթ. Իսպանիայում ընթացած քաղաքական գործընթացների և գահակալման համար պայքարի վերաբերյալ հայ պատմագրության մեջ ուսումնասիրված չէ:

«Եվրոպա» շաբաթաթերթը

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ «Եվրոպա» շաբաթաթերթը բավական ծանրակշիռ դեր ունի: Այն լույս տեսավ 1847 թ. հուլիսին, սկզբում որպես շաբաթական լուրեր, այնուհետև քաղաքական և ուսումնական կիսամյա խորագրով: 1840-ական թթ. լույս տեսած հայ պարբերականների թվում «Եվրոպան» առանձնանում է հատկապես հրապարակած քաղաքական լուրերի բազմազանությամբ և աշխարհի տարբեր կողմերում տեղի ունեցած իրադարձությունների հրատապ ու անաչառ լուսաբանմամբ: Թերևս հայ որևէ պարբերական այնքան խորը, հանգամանորեն և իրազեկվածությամբ չի լուսաբանել հատկապես 1840-

ական թթ. եվրոպական քաղաքական իրադարձությունները, որքան «Եվրոպան»: Պարբերականի հրատարակման նախաձեռնողն արևմտահայ ականավոր ամիրա Հակոբ Չելեպի Տյուզյանցն էր, ով Մխիթարյաններին հորդորում էր գրել «Ծանրութեամբ, հանդարտութեամբ, ընտրութեամբ և կարելի եղածին չափ մաքուր ոճով» [1,100]:

«Եվրոպայի» խմբագիրներն ու լրագրողներն ի սկզբանե հավատարիմ մնացին այս պատգամին՝ պարտավորվելով «Լրագիրներու վախճանն ու դիտումը» համարել «Աստված, Հայրենիք ու Գիտություն»: Նրանք հուսով էին, որ իրենց «այս բարձր վախճանը» համահունչ է թերթի ընթերցողների «ազնուական մտածողութիւններին», որը նաև «լրագիրներու մշտնջենավոր ու անեղծ կնիքը կը մնայ»: Ելնելով այս մտայնությունից՝ Մխիթարյան միաբանության լրագրողներն իրենց առաջնահերթ խնդիրը համարում էին «Ժամանակիս ամէն դէպքերը, մանաւանդ հիմակուան Եւրոպայի խռովութիւնները, իրենց բնական աղէկ կամ գէշ գունովը նկարել, որ ընթերցողները աղէկը տեսնեն ու հետևին, գէշն իմանան ու փախչին: Այս ամէն դէպքերուն մեջ հավատարմութիւնն ու ճշմարտասիրութիւնը միշտ մեզի նպատակ դրած ենք, որն որ կը յուսանք որ մինչև հիմա պահած ենք, ասկեց ետքը պահելիքներուս ալ՝ մեր թերթերը վկայեն» [26, 4]:

Մխիթարյաններն այսպես գրում էին 1848 թ. հունիսին, երբ եվրոպական բազմաթիվ երկրներում տեղի էին ունենում հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումներ ու անզիջում պայքար: Մխիթարյան միաբանությունը միաձույլ կազմակերպություն էր, կրոնական, քաղաքական, լուսավորական ու մշակութային հստակ ուղղվածությամբ՝ հավատարիմ իր պատգամներին: Բայց խռովահույզ այդ օրերին, երբ վճռվում էր եվրոպական շատ ժողովուրդների ապագան ու զարգացման հեռանկարը, անգամ այդ միաձույլ կազմակերպությունը «չէր կարող միանգամայն ազատագրել իր առանձին անդամներին նոր հովերի և գաղափարների ազդեցությունից: Նրանք սկզբում քողարկված և զուսպ ոճով, իսկ հետագայում ավելի ու ավելի պարզորոշ ձևով արձագանքում են ազգային-ազատագրական շարժումներին» [2, 334]:

Ինչ վերաբերում է եվրոպական քաղաքական բարդ, խճճված ու հակոտնյա իրադարձություններին, ապա Մխիթարյանները դրանց նկատմամբ դրսևորում են անկողմնակալ մոտեցում: Այս դիրքերից «Եվրոպայի» խմբագիրները լուսաբանում են Իսպանիայում կառլոսյան երկրորդ պատերազմը: Թերթի լրատվության հիմնական աղբյուրը եվրոպական մամուլի հրապարակումներն ու ստացված հեռագրական լուրերն

են: «Եվրոպան» դրանց հղում անելու հարցում խտրականություն չի դնում, բայց կարևորում է ստացված լուրերի իսկությունն ու հավաստիությունը: Թերթը հավասարապես օգտվում է ինչպես պաշտոնական, այնպես էլ կիսապաշտոնական և անկախ լրագրերի տեղեկատվությունից: Եթե «Եվրոպայի» ստացած որևէ լուր հերքվում էր կամ լրացվում էր նոր տեղեկություններով ու մանրամասնություններով, ապա թերթը հարկ էր համարում անպայման դրանց անդրադառնալ: Ստացված լուրերի իսկությունը բացահայտելը և դրանք անաչառ ու անկողմնակալ դիրքերից ներկայացնելը «Եվրոպայի» լրագրողները համարում են իրենց առաջնահերթ խնդիրն ու լրագրողական պարտականությունը:

«Եվրոպան» կառույցան պատերազմի պատճառների մասին

1840-ական թթ. երկրորդ կեսին Իսպանիայում ընթացող քաղաքացիական պատերազմը թերթի ընթերցողներին հասկանալի լինելու համար «Եվրոպան» համառոտ, բայց բավական հավաստի ներկայացնում է դրան նախորդած քաղաքական իրադարձությունները: Թերթի պատմելով մինչև 1808 թ. Նապոլեոն Բոնապարտի արշավանքը, Իսպանիայի միապետերը «ազգի վրա բացարձակ իշխանութիւն ունեին», բացի Բիսկայան գավառներից: Այստեղ ժողովուրդը իրավունք ուներ գավառական ժողովներ հրավիել, հասարակական ծախսերը կարգավորել և արքունի տուրքերը որոշել, որը կոչվում էր «Ձրի պարզկ»: Այս գավառները Ֆրանսիայի սահմանին մաքսային օրենքներից ազատ էին, որոնց իրավունքներն ու ազատությունները համարվում էին ֆուերոս¹:

1808 թ. Նապոլեոն Բոնապարտն իր ավագ եղբորը Իսպանիայի թագավոր հռչակեց, նախկին բացարձակ իշխանությունը վերացրեց և փորձեց Ֆրանսիայի սահմանադրության համաձայն հանրապետություն հռչակել կամ սահմանադրություն շնորհել, բայց «այնչափ արհիւնահեղ պատերազմովը չկըրցաւ հաստատել»: 1812 թ. իսպանացիները կորտեսներ (ազգային ժողով) հրավիրեցին և 1791 թ. ֆրանսիական սահմանադրության նմանությամբ սահմանադրություն հռչակեցին: Ըստ թերթի՝ սահմանադրությամբ «գլխավոր իշխանութիւնը ժողովրդեան ձեռքը կը

¹ Ֆուերոս (իսպաներեն fueros, պորտուգալերեն toraes՝ իրավունք, արտոնություն), Պիրենեյան թերակղզու պետությունների օրենքների ժողովածու, որոնք վերաբերում էին պետության բոլոր հպատակներին, ինչպես նաև գավառների ու մունիցիպալիտետների իրավունքները հաստատող օրենքներ: XIV-XV դարերում Իսպանիայում ֆուերոսը հավասարապես կիրառվում էր թագավորական օրենքների հետ:

տուեր», որովհետև թագավորը միայն իրավունք ուներ ազգային ժողովի որոշումներն անորոշ թողնել կամ դրանց վրա վետո կիրառել [8, 7]: «Եվրոպան» արժանահավատ տեղեկություններ է տալիս Իսպանիայում ֆուերոսի, Նապոլեոնի արշավանքի ձախողման և 1812 թ. մարտի 19-ի Կադիսյան կորտեսների ընդունած սահմանադրության մասին: Այն ժամանակի ամենաազատական սահմանադրությունն էր, որը հռչակում էր ժողովրդական ինքնավարության սկզբունքը և հաստատում էր սահմանադրական միապետությունը [3, 315-316; 5, 205, 211-226; 6, 35-36]:

«Եվրոպայի» հավաստի պատմելով՝ 1814 թ. ստանձնելով Իսպանիայի գահը՝ Ֆերդինանդ VII-ը 1812 թ. սահմանադրությունը վերացրեց և վերականգնեց թագավորի անկախ իշխանությունը: Բայց դա երկար չտևեց, 1820 թ. իսպանական զորքն ապստամբեց և պահանջեց վերականգնել 1812 թ. սահմանադրությունը: Ֆերդինանդ VII-ը այդ պահանջը բավարարեց, մինչև որ 1823 թ. Ֆրանսիայի թագավոր Շառլ X-ի որդի Անգուլեմի դուքսը ֆրանսիական զորքով մտավ Իսպանիա, որի հետևանքով վերականգնվեցին նախկին օրենքները: Թերթն իրավացի է. 1814 թ. մարտին Նապոլեոն Բոնապարտի կողմից Ֆրանսիայում «պատվավոր բանտարկությունում» գտնվող Ֆերդինանդ VII-ը վերադարձավ հայրենիք: Վալենսիայում մի խումբ պալատականներ և կորտեսների 69 «ստրկամիտ» պատգամավորներ նրան հանձնեցին այսպես կոչված «պարսիկների մանիֆեստ», որտեղ իսպանացիների անունից իրենց հավատարմությունն էին հայտնում և խնդրում վերականգնել իր լիիրավ թագավորական իշխանությունը: Մայիսի 4-ին Ֆերդինանդ VII-ը վերացրեց 1812 թ. Կադիսյան սահմանադրությունը, իսկ երկու շաբաթ անց Կաստիլիայի կապիտան-գեներալ Էզիան ազատ արձակեց Մադրիդում երկրորդ նստաշրջանին հավաքված կորտեսներին:

1820 թ. հունվարի 1-ին Լաս-Կաբեսասի զինվորական կայազորի բարձրացրած ապստամբության օրերին՝ 1821թ. մարտի 1-ին, Ֆերդինանդ VII-ը վերականգնեց Կադիսյան սահմանադրությունը, որը կրկին չեղարկվեց 1823 թ. մայիսին Ֆրանսիայի օգնությամբ ապստամբությունը ճնշելուց հետո, իսկ հոկտեմբերի 1-ին վերացրեց վերջին երեք տարում կորտեսների ընդունած բոլոր օրենքները [5, 232, 245; 4, 219-229; 3, 318, 321]:

«Եվրոպայի» հավաստի պատմելով՝ 1830 թ. մարտի 29-ին Ֆերդինանդ VII-ը թագավորական հրովարտակով գահակալման նոր կարգ սահմանեց, որով գահը կարող էին ժառանգել ոչ միայն թագավորի տղաները, այլև աղջիկները: Թագավորի եղբայր դոն Կառլոսն այս օրենքը չըն-

դունեց ու դրա դեմ բողոքեց: 1833 թ. Ֆերդինանդ VII-ը մահացավ և «Եվրոպայի» բնութագրմամբ «իր թագավորութիւնը խռովութեան և շփոթութեան մէջ թողոյց»: Երեքամյա արքայադուստր Իզաբելլան թագուհի հռչակվեց, իսկ նրա մայրը՝ թագուհի Մարիա Քրիստինան՝ գահի տեղապահ: Իսպանիայի կենտրոնական և հարավային գավառները Իզաբելլային իրենց թագուհի ճանաչեցին, բայց Նավարրան ու Բիսկայան գավառները և գյուղացիությունը դոն Կառլոսին թագավոր հռչակեցին՝ «իրենց ազատութիւնները կամ ֆուերոսը պաշտպանելու համար» [8, 7]:

«Եվրոպան» ճիշտ է ներկայացնում գահակալման համար սկսված պայքարը: Թագավորի եղբայր դոն Կառլոս Իսիդորոն, չջանկանալով բացահայտ խռովություն բարձրացնել և հենվելով 1714 թ. սահմանված սալիչյան իրավունքի վրա, 1833 թ. հոկտեմբերի 3-ին հրապարակեց «Մանիֆեստ դե Արբանտես»: Նրանում դոն Կառլոսը թագավորի հրովարտակը հայտարարեց անօրինական և վիճարկեց գահի նկատմամբ երեքամյա Իզաբելլայի օրինական իրավունքը: Նա իրեն հայտարարեց Իսպանիայի թագավոր Կառլ V և իր կողմնակիցներին, որոնց սկսեցին անվանել կառլոսականներ, կոչ արեց զենք վերցնել ու պաշտպանել իրենց իրավունքները: Երկրում զինվորական խռովություն սկսվեց, որի մասնակիցները պահանջում էին դոն Կառլոսին ճանաչել Իսպանիայի նոր թագավոր: Գահի տեղապահ Մարիա Քրիստինան, ձգտելով պահպանել իր իշխանությունը, դիմեց լիբերալների օգնությանը, որոնք, հաղթահարելով իրենց տարաձայնությունները, աջակցեցին Իզաբելլային և Մարիա Քրիստինայի տեղապահությանը [5, 295; 4, 232, 233; 3, 335-339]:

«Եվրոպայի» բնութագրմամբ այսպես սկսվեց «գարիուրելի պատերազմ», որի ժամանակ դոն Կառլոսի կողմնակից «Ջումալա Գարեկուն մեծամեծ քաջութիւններ գործեց» [8, 7]: «Եվրոպան» նկատի ունի կառլոսական զենեռալ Թոմաս դե Սումալակարրեգիին, ով 1834 թ. զարնանը կարողացավ միավորել ապստամբների ցարքոցրիվ ուժերը և համախմբել 18 հազար կազմակերպված բանակում, որը հաջողությամբ դիմադրում էր թագավորական 120 հազար բանակին: Թ. Սումալակարրեգիի գործողությունների շնորհիվ կառլոսականները վերահսկում էին Բասկերի երկրի և Հյուսիսային Կատալոնիայի մեծ մասը: Նրանք շարժվեցին Արագոն՝ նպատակ ունենալով դուրս գալ Էբրո գետի հովիտը և հարձակում սկսել Մադրիդի վրա [5, 296]:

Այդպիսի փորձ 1836 թ. կատարեց կառլոսականների ճամբարը համարյաձ Ռամոն Կարբերան, ով իր գորքով մտավ Արագոն, Վալենսիա և Անդալուսիա: Բունոլեի և Բուրխաստոտի կռիվներում նա հաղթանակ

տարավ թագավորական գորքերի հրամանատարներ Բալդոմերո Էսպարտերոյի և Լեոպոլդո Օ'Դոննելլի նկատմամբ, այնուհետև գրավեց Մորելլա ամրոցը, որի համար դոն Կառլոսը նրան կոմս Մորելլա տիտղոս շնորհեց ու նշանակեց մի շարք գավառների գեներալ-կապիտան: Այնուամենայնիվ պատերազմը դոն Կառլոսի օգտին չավարտվեց, որը հավաստում է «Եվրոպան»: Ըստ թերթի՝ 1839 թ. կառլոսական գեներալ «Ռաֆայել Մարոտտոյի մատնությամբ» դոն Կառլոսը հարկադրված անցավ Ֆրանսիա, որտեղ 1845 թ. հրաժարվեց Իսպանիայի գահի նկատմամբ հավակնություններից՝ հօգուտ իր որդի դոն Կառլոս կրտսերի: Նախկինում «նա Աստուրիայի իշխանն էր, իսկ այժմ նրան անվանում են կոմս Մոնտեմոլին» [8, 7]:

«Եվրոպան» ընդհանուր առմամբ հավաստի է ներկայացնում կառլոսյան առաջին պատերազմը, որի առաջին փուլում (1832-1836) հակամարտող կողմերը կազմակերպվում էին, բանակ հավաքում և ամրապնդում իրենց դիրքերը: Երկրորդ փուլում (1836-1837) կառլոսականներն անցան հարձակման, լրջորեն սկսեցին սպառնալ Մադրիդին և մի պահ նույնիսկ մոտ էին հաղթանակի: Երրորդ փուլում (1838-1840) կառլոսականների շարքերում դավաճանություն տեղի ունեցավ, ու նրանք պարտություն կրեցին: Թերթը ճիշտ էր տեղեկացված, որ դոն Կառլոսի պարտությունը մասամբ կապված էր գեներալ Ռաֆայել Մարոտտոյի պառակտիչ գործողությունների հետ: Դրա համար դոն Կառլոսը նրան համարում էր խռովարար ու դավաճան, ով 1839 թ. օգոստոսի 29-ին Վերգարայում պատերազմը դադարեցնելու մասին հաշտություն կնքեց թագավորական բանակի գեներալ Բալդոմերո Էսպարտերոյի հետ: Արևելքում գեներալ Ռ. Կաբրերան, իր տրամադրության տակ ունենալով 22 հազար զինվոր, մինչև 1840 թ. հուլիսը շարունակեց պայքարը: Աջակցություն չունենալով ոչ մեկից՝ նա հարկադրված անցավ Ֆրանսիա: Դոն Կառլոսը նույնպես գնաց Ֆրանսիա, որտեղ Լուի Ֆիլիպի կարգադրությամբ վտարվեց Բուրժ [5, 304, 305; 4, 244, 245; 6, 94]:

«Եվրոպայի» հավաստի պատմելով՝ 1843 թ. հոկտեմբերի 10-ին Իզաբելլան հայտարարվեց չափահաս, հռչակվեց թագուհի և 1845 թ. փոխեց Իսպանիայի սահմանադրությունը: 1846 թ. Ֆրանսիայի Բուրժ քաղաքում «վտարանդիության մեջ գզուշավորությամբ ապրող» կոմս Մոնտեմոլինը փախավ Լոնդոն և «իր կողմնակիցներին դրդեց այստեղ այնտեղ ոտքի ելնել» [8, 7]:

Թերթն իրավացի է. կոմս Մոնտեմոլինը կառլոսյան առաջին պատերազմի ժամանակ ուղեկցում էր հորը: Պարտությունից հետո նրանք

փախան Ֆրանսիա: 1845 թ. մայիսի 18-ին դոն Կառլոսը ինքնակամ հրաժարվեց գահի նկատմամբ հավակնությունից՝ հօգուտ իր տղայի՝ դոն Կառլոս կրտսերի: 1846 թ. վերջին դոն Կառլոս Լուիսը մանիֆեստ հռչակեց ու իր կողմակիցներին կոչ արեց զինված պայքարի: Այդպես սկսվեց գահակալման համար կառլոսյան երկրորդ պատերազմը [5, 149; 6, 149]:

«Եվրոպան» իրավացիորեն պատերազմի գլխավոր պատճառը համարում է դոն Կառլոս կրտսերի՝ կոմս Մոնտեմոլինի ձգտումը ցանկացած գնով հաստատվել Իսպանիայի գահին: Պատերազմի բռնկման գործում, սակայն, ոչ պակաս դեր խաղաց նաև այսպես կոչված «իսպանական ամուսնությունը», որը չի վրիպում թերթի ուշադրությունից: «Եվրոպայի» հավաստի տվյալներով՝ 1846 թ. հոկտեմբերի 10-ին Իզաբելլա II-ը ամուսնացավ իր հորեղբոր տղա դոն Ֆրանսիսկոյի հետ, իսկ նրա քույր Լուիզան՝ Ֆրանսիայի թագավորի որդու՝ դուքս Մոնպանսիեի հետ: Թերթի իրատեսական դիտարկմամբ՝ այս կրկնակի ամուսնությունը Ֆրանսիայի և Անգլիայի թագավորությունների միջև «գժտության պատճառ եղավ, որովհետև անգլիացիները չէին ցանկանում, որ Ֆրանսիայի թագավորները Իսպանիայի հետ մերձավոր կապեր ունենան» [8, 7]:

«Եվրոպան» ճիշտ է նկատում, որ «իսպանական ամուսնությունների» պատճառով Ֆրանսիայի և Անգլիայի հարաբերությունները բարդացան: Ֆրանսիան ցանկանում էր Իզաբելլա II-ին ամուսնացնել Լուի Ֆիլիպ II-ի տղայի՝ Օմալի դքսի հետ, իսկ Անգլիան առաջարկում էր իր թեկնածուին՝ Լեոպոլդ Սաքսեն-Կոբուրգ-Գոթթագուին: Այս տերություններից բացի՝ Ավստրիան առաջարկում էր դոն Կառլոսի տղայի՝ կոմս դե Մոնտեմոլինի, Նեապոլի թագավորությունը՝ Իզաբելլայի զարմիկ Ֆրանչեսկոյի (կոմս Տրապանի), իսկ իսպանական առաջադիմականները՝ Իզաբելլայի մեկ այլ զարմիկի՝ Էնրիկե Սևիլիացու թեկնածությունը: Այս պետությունների միջև ծագած դիվանագիտական պայքարի արդյունքում Անգլիայի և Ֆրանսիայի միջև ձեռք բերվեց փոխզիջում, որի համաձայն՝ Իզաբելլան ամուսնացավ իր կրտսեր հորեղբոր տղայի՝ Ֆրանսիսկո դե Ասիսի հետ: Անգլիան Լուիզա Ֆերնանդայի ամուսնությունը Ֆրանսիայի թագավորի տղայի հետ համարում էր իր դիվանագիտական անհաջողությունը՝ գտնելով, որ դա կարող է ուժեղացնել Ֆրանսիայի ազդեցությունը իսպանական արքունիքի վրա [5, 314, 315; 3, 344, 345; 6, 111]:

Իզաբելլա II-ի ամուսնությունը խափանեց օրինական ճանապարհով թագավոր դառնալու դոն Կառլոս կրտսերի բոլոր ծրագրերը: Կառլոսականները գիտակցում էին, որ Իզաբելլա II-ի զավակ ունենալու դեպքում կոմս Մոնտեմոլինը զրկվում է գահին տիրելու հնարավորությունից,

ուստի նոր գահակալական պատերազմ սանձազերծեցին: «Եվրոպան» Իզաբելլա II թագուհու ամուսնությունը համարում է դժբախտ, որովհետև ամուսնությունից հետո նրա հարաբերությունները դոն Ֆրանսիսկոյի հետ չստացվեցին, ու նրանք գծողության մեջ են մինչ օրս: Թերթի դիտարկմամբ՝ դրանից օգտվեցին կառուսականները, որոնք «տեսնելով իսպանական արքունիքում ստեղծված վիճակը, ինչպես երևում է, վերջերս բավական ոգևորված են» [8, 7]:

«Եվրոպան» ճիշտ է ընկալում կառուսականների մտադրությունը գահին տիրելու հարցում: Նրանք հույս ունեին, որ թագավորի կոչում ստացած, ժառանգ ունենալու անընդունակ, Ֆրանսիսկո Ասիսի և թագուհու գծոված հարաբերությունները ճանապարհ են հարթում դոն Կառլոս կրտսերի համար: Թագուհու անժառանգության հեռանկարից ոգևորված էր նաև ֆրանսիական արքունիքը: Լուի Ֆիլիպը հույս էր փայփայում, որ այս պարագայում Իսպանիայի գահը կանցնի Իզաբելլայի քրոջը՝ Լուիզա Ֆերնանդային՝ իր տղայի կնոջը՝ ասել է, թե իր արքայատոհմին [5, 315, 316; 6, 111]:

Կառլոսյան երկրորդ պատերազմը

«Եվրոպան» ըստ էության ճիշտ է ընկալում կառլոսյան պատերազմի պատճառները, թեպետ դրանց մասին հստակ վերլուծություն չի անում: Եվրոպական երկրներում միապետական կարգերի պահպանման կողմնակից Մխիթարյան միաբանները լավ էին հասկանում, որ Իսպանիայում գահակալական պայքարն ընթանում է իշխող արքայատոհմի անդամների միջև: Կառլոսյան առաջին պատերազմի ժամանակ անչափահաս Իզաբելլայի մայրը՝ գահի տեղապահ Մարիա Քրիստինան, պայքարում էր իր աղջկա հորեղբոր՝ դոն Կառլոսի դեմ: Կառլոսյան երկրորդ պատերազմում Իզաբելլա թագուհին իր գահը պահպանելու համար կռվում էր իր հորեղբոր տղայի՝ դոն Կառլոս կրտսերի դեմ:

Ելնելով դրանից՝ Մխիթարյանը պատերազմող կողմերից որևէ մեկի նկատմամբ համակրանք կամ հակակրանք չեն արտահայտում: Ուստի նրանց թերթը գերադասում է եվրոպական մամուլի տարաբնույթ հրապարակումների հիման վրա հնարավորինս շատ տեղեկություններ տալ Իսպանիայում ընթացող իրադարձությունների մասին: Այս իմաստով «Եվրոպայի» հրապարակումները բազմազան են, որոնք վերաբերում են Իզաբելլա II-ի ներքին ու արտաքին քաղաքականությանը, կառավարության անդամների հաճախակի փոփոխությանը, պատերազմական գործողություններին, թագուհու անձնական կյանքին և շատ այլ իրադարձությունների: Դրանց մասին պատմելիս «Եվրոպան» հիմնականում հիշա-

տակում է իր տեղեկատվության աղբյուրը, աշխատում է դրանք ներկայացնել ամբողջությամբ, շատ հաճախ՝ առանց որևէ մեկնաբանության, վերլուծության կամ սեփական կարծիք արտահայտելու: Այս մոտեցումն ամեննին չի նշանակում, որ «Եվրոպայի» խմբագիրներն ու լրագրողները չեն հասկանում Իսպանիայում ընթացող իրադարձությունները և ի գորու չեն դրանք մեկնաբանել կամ վերլուծել: Նրանք պարզապես առաջնորդվում են իրենց տրված պատգամով՝ գրել ծանրակշիռ, հանդարտությամբ, առանց որևէ կողմնակալության, ստացված լուրերի իսկությունը ստուգելով:

«Եվրոպան» գերմանական լրագրերից մեկի տեղեկությամբ գրում է, որ 1847 թ. հունիսի 13-ին Կատալոնիայից ստացված լուրերը «շատ ձախորդ են»: Ժերոնա գավառում ժողովրդական սաստիկ ապստամբություն է սկսվել: Ֆիկուերասում ապստամբության վախն այնպիսի մթնոլորտ է ստեղծել, որ պետական պաշտոնյաները չեն համարձակվում իրենց պատնեշներից գիշերները դուրս գալ: Բարսելոնայում դոն Կառլոսի կողմնակիցները նկատվում են ամենուրեք, որոնք դրսի ապստամբների հետ կապ ունեն: Նահանգապետ Մանուել Պավիայի հրամանով 12 հոգի ձերբակալվել ու բանտարկվել են: Դոն Կառլոսի կողմնակիցներին բուրբուղին չի վախեցնում տարբեր վայրերում ապստամբածների ողորմելի վիճակը: Նրանք «այնքան հանդգնել են», որ մի շարք տեղերում թագուհու գործքին պարտության են մատնել, Մանրեզայում վառողի պաշարները հափշտակել են և հարձակվել Իկուալատա քաղաքի վրա:

Գյուղացիները գաղտնի աջակցում են կառլոսականներին, որոնց գործակալները մարդկանց գրգռում են՝ հայտարարելով, որ տեսեք, թե ինչ վիճակում են գտնվում Կատալոնիայի արհեստները: Թագուհու իշխանությունը երկրի շահը գոհաբերել է Ֆրանսիային ու Անգլիային, իսկ Մադրիդի արքայական պալատը ապրում է ճոխության և շքեղության մեջ: Սրանից բացի դժգոհության այլ պատճառներ նույնպես կան, շարունակում է գերմանական թերթը, մասնավորապես մարդկանց սաստիկ աղքատությունը, գործազրկությունը, երաշտի պատճառով հացահատիկի պակասը, տուրքերի ծանրությունը, նոր զորահավաքի կարգը: Այս ամենը բավական է, որ ցանկացած կայծից հրդեհ բռնկվի: Եթե Կատալոնիայում գտնվող 40 հազար գործը չի կարողանում հիմա դոն Կառլոսի 2 հազար կողմակիցների «անկարգութիւնները խափանել», ապա ի՞նչ է անելու, հարցնում է թերթը, եթե ամբողջ բնակչությունը ոտքի էլնի: Կառլոսականների «կիրքը, խստութիւնն ու համառութիւնը սաստիկ լինելով» շատ վատ

սպառնալիքներ կարող է ստեղծել, որով Մադրիդի կառավարությունն այնպիսի վիճակի մեջ կարող է հայտնվել, եզրակացնում է թերթը, «որ իր բոլոր գործերամբ հազիվ թէ կրնայ առջևը առնուլ» [8, 7]: Գերմանական լրագրի տեղեկությունները հավաստի էին, իսկ դատողություններն ու եզրակացությունները՝ հիմնավոր, որոնց հետ «Եվրոպան» համամիտ էր, այլապես ստացված բազմաթիվ լուրերից նախապատվությունը չէր տա գերմանական լրագրին, որի անունը, կարծում ենք, մտածված չի նշում:

Լոնդոնում այն կարծիքին են, գրում է «Եվրոպան», որ կոմս Մոնտեմոլիսի գլխավոր կողմնակիցները շատ շուտով անձամբ Իսպանիա կմեկնեն: Նրանցից յուրաքանչյուրը մեկնելու է իր ծանոթ գավառները, որտեղ կարող են ընդունելության արժանանալ: Իսպանիա մեկնողների առաջնորդներն են Կաբրերան, Սարադեկուին, Էլիոն, Ֆորքատելը, Գոմեսը, Արրոյոն և Արեվալոն [8, 7]:

Ճիշտ ներկայացնելով կառուսականների զինված խմբավորումների հրամանատարներին՝ «Եվրոպան» այնուհետև 1847 թ. հունիսի 19-ին Բարսելոնայից եկած լուրերով հայտնում է Մոնտեպրեոյի լեռներում 80 մոնտեմոլիսականների և թագավորական զնդերից մեկի ընդհարման մասին: Ըստ այդ լուրի՝ թագավորական զունդը, շատ զոհեր տալով, նահանջել է, իսկ Բարսելոնայում ապստամբների թիվը գնալով ավելանում է [9, 11]:

1847 թ. հունիսի վերջին Մադրիդից ստացված լուրերով «Եվրոպան» գրում է, որ մոնտեմոլիսականները Բուրգոսի գավառում ապստամբության են նախապատրաստվում, որոնց առաջնորդը գնդապետ Էլ Էստուդիանտեն է: Կատալոնիայի Ֆենելլոսա քաղաքում կանխվել է քաղաքում գտնվող զինվորներին թունավորելու փորձը: Բուրգոս, Տոլեդո և Վալենսիա քաղաքներում նույնպես ապստամբության նախապատրաստություններ են երևում:

Հունիսի 29-ին լուրերը տեղեկացնում են, որ գնդապետ Արրոյոն միավորվել է Էստուդիանտեի հետ: Նրանք այս պահին ունեն 110 հեծյալ, որոնք միօրինակ հանդերձանք են կրում: Հունիսի 22-ին Կատալոնիայում թագուհու զորքը ընդհարվել է 250 կառուսականների հետ, որոնցից 21-ը սպանվել են, մեկը գերի է ընկել: Թագավորական զորքից 7-ը սպանվել են, 14-ը՝ վիրավորվել:

«Եվրոպան» այնուհետև տեղեկացնում է, որ 1847 թ. մարտին Իզաբելլա II թագուհու դեմ մահափորձ կատարած դե լա Ռիվան ձերբակալվել և կանգնել է դատարանի առաջ: Նրա հարցաքննությունից պարզվել է, որ Իսպանիայում գործում է շատ տարածված գաղտնի ընկերություն: Ըստ

«Եվրոպայի» ունեցած տեղեկությունների՝ այս ընկերության նպատակն է «միապետական կառավարութիւնը տակնուվրայ ընեն փոխեն ու քրիստոնեական կրոնը ջնջեն վերացնեն»: Պարզվել է, որ այս «չար ընկերութեան» ղեկավարը թագավորի հայրը և թագուհու հորեղբայրն է՝ դոն Ֆրանսիսկո դե Պավիան, ով ներկա է լինում ընկերության բոլոր ժողովներին և ստորագրում նրանց ընդունած որոշումները: Կառավարության անդամները մի քանի օր առաջ դոն Ֆրանսիսկոյից բացատրություն են պահանջել և սպառնացել, որ եթե այսուհետև «այսպիսի անզգամ ու չար գործի մասնակից դառնա, ապա Իսպանիայից կարտաքսվի» [9, 15]: «Եվրոպան» գաղտնի ընկերություն ասելով նկատի ունի Իսպանիայում գործող մասոնական օթյակներն ու կարբոնարների վենտաները, որոնց անդամներից շատերը նապոլեոնյան տիրապետության դեմ պայքարող գերիլիայի հերոսներն էին, 1812թ. կադիսյան սահմանադրության նախաձեռնողները և 1820-1823 թթ. պայքարի գլխավոր կազմակերպիչներն ու ղեկավարները [5, 234]:

Պրուսիայի «Ընդհանուր լրագրի» տեղեկություններով «Եվրոպան» գրում է, որ կառլոսական գեներալ Էստուդիանտե դե Վիլասուրի հրամանատարության տակ կովոդ փոքրաթիվ զնդերի վրա հարձակված թագուհու զորքը նրանց թեպետ շատ կորուստներ պատճառեց, բայց չոչնչացրեց: Բուրգոսի պահապան զորքը ուժեղացնելու նպատակով Իզաբելլա II-ը լրացուցիչ ուժեր է ուղարկել Սորբայից, Վիտտորիոյից և Վալենսիայից: Դոն Ֆիլիպ Ռիբերոն հայտարարել է, որ ամբողջ զավառը պաշարման մեջ է: Ըստ ստացված լուրերի՝ Բելորադո, Բրիմիեսքա և Սոլար դե լա Ինֆանտես վայրերն անցել են կառլոսականների հսկողության տակ: Լամպուրդանում գտնվող 150 կառլոսականների վրա Ֆիգուերասից արշավում է երկու գունդ հետևակ և մի խումբ հեծյալներ:

Կատալոնիայում թեպետ 24 հազար զորք կա, գրում է թերթը, այնուամենայնիվ դա բավական չէ նահանգի բոլոր կողմերը պաշտպանելու համար, մանավանդ, որ Ֆրանսիայի հետ սահմանակից Լամպուրդանի նահանգը պաշտպանող զորք չկա: Հավանաբար այս պատճառով են կառլոսականները գնացել Լամպուրդան: Նրանք հույս ունեն հուլիսի 15-ին կայանալիք զորահավաքի ժամանակ երիտասարդության մեծ մասին իրենց կողմը գրավել: Բարսելոնայի զինվորական հրամանատարությունը զգուշացնում է, որ քաղաքի վրա կառլոսականները կարող են հանկարծակի հարձակվել, ուստի բոլոր կողմերից զորք են կանչում:

Մոնբլանի կողմերում գտնվող Մանուել Պավիա կուսակալը, իր

լրտեսներից լուր ստանալով, որ կառլոսականները մոտենում են Մոնբլանին, հուլիսի 2-ին իր գործով շարժվեց նրանց ընդառաջ: «Եվրոպայի» ստացած տեղեկություններով կառլոսականներն ամենուրեք ավերածություններ են անում, իշխանությունների ներկայացուցիչներին սպառնում են պատժել, եթե իրենց պահանջները չկատարեն: Թերթը վկայակոչում է գնդապետ դոն Ռամոն Վիլելլայի տարածած թռուցիկը Իկուալատայում, որի բուն իմաստն այս էր. «Կամ ստակ կամ արյուն»:

Նավարրայից և բասկերի գավառներից 1847 թ. հուլիսի 12-ին նամակները հայտնում են, որ մոնտեմոլիստները որոշել են իրենց համախմբման վայրը դարձնել Պամպլոնը: Նրանք նահանգները բաժանել են փոքր գավառների և յուրաքանչյուրում նշանակել իրենց հրամանատարը: Չորքի համար անհրաժեշտ գումարը պահում են Բայոնում և սպասում են պատերազմ սկսելու ազդանշանի [11, 23]:

Վիտտորիոյից ծանուցում են, գրում է «Եվրոպան», որ մոնտեմոլիստները նորից ջանքեր են գործադրում նոր ապստամբություն բարձրացնելու համար: Բուրգոսի գավառում հանգիստ է, բայց մյուս գավառներում կառլոսականների ու թագուհու զորքերի բախումները, փոքր կռիվներն անպակաս են [12, 31]:

Օգոստոսի 3-ին Փարիզից եկած լուրերով «Եվրոպան» հայտնում է Կատալոնիայում Վետրետասի մոտ տեղի ունեցած արյունալի ընդհարման մասին: Չորս ժամ շարունակ կռիվ է ընթացել չորս կողմից ժայռերով, դարավանդներով ու խորունկ կիրճերով շրջապատված անտառի մեջ: Կովի ժամանակ գերի է ընկել կառլոսականների հրամանատար դոն Մանուել Հերարան, որին հաղթել է Վալենսիայի թագավորական գնդի հրամանատարներից դոն Ֆրանչեսկո դե Ցեպալան: Երբ այս կովի լուրը հասավ Ժիրոնայի կառավարիչ գեներալ Էննային, նա անմիջապես զորք ուղարկեց տարբեր վայրեր, որտեղ պարտված ու ցաքուցրիվ եղած կառլոսականները կարող էին կրկին միավորվել:

Իսպանիայից ստացված լուրերով «Եվրոպան» գրում է, որ Սարագոսայում ռստիկանները փնտրում և չեն գտնում կառլոսականներից Սասարային: Նա մի ժամանակ կռվում էր գեներալ Ռ. Կաբրերայի հրամանատարության տակ: «Այս մարդն իր արհուրյան համար, գրում է «Եվրոպան», կառլոսականների շրջանում մեծ անուն ունի»: Թերթը միաժամանակ հայտնում է, որ Կատալոնիայում կառլոսականների գնդերի հրամանատարությունը գեներալ Բենետ Տրիստանիի մահից հետո անցել է Բոգուիգային [13, 38]:

«Եվրոպայի» դիտարկմամբ՝ «Կատալոնիայի ապստամբությունը երթալով զօրանալու վրայ է, ու նոր կերպարանք մը կը ստանայ»: Կատալոնիայում գտնվող թագավորական զորքերի հրամանատարը օգոստոսի 12-ին կառավարությանը հայտնել է, որ երիտասարդներից շատերը միանում են կառուսականներին, որոնց թիվը հիմա կրկնապատկվել է: Օգոստոսի 21-ին Վինկենտիոսի շրջանում կառուսականների մեծ գունդ է երևացել և Կառլ VII-ի անունից ժողովրդին ելնելու կոչ արել: Այլ տեղերում նույնպես կառուսական գնդեր են հայտնվել, որոնցից մեկը Լա Սելմայի մոտ թագավորական զորքից պարտություն է կրել ու ցրվել: Լա Սելմայի շրջանում լրացուցիչ 9 հազար զինվոր է ուղարկվել, որտեղ թագավորական զորքի թիվը հասել է 30 հազարի: Մանրեսայի կողմերում թագավորական զորքի հրամանատարը գերի ընկած 15 կառուսականների գնդակահարել է, որոնց թվում է նաև գեներալ Մ. Հերրարան [14, 46]: «Եվրոպան» դա համարում է տեղի ունեցած դեպք, իրողություն, որին որևէ գնահատական չի տալիս: Թերթն անտեսում է այն իրողությունը, որ գերիներին առանց զինվորական դատարանի մահապատժի ենթարկելն անթույլատրելի է, զինվորական հանցագործություն:

1847 թ. սեպտեմբերի դրությամբ, գրում է «Եվրոպան», Կատալոնիայում կառուսականների թիվը կազմում է 4 հազար: Նրանք նահանգի քաղաքների ու գյուղերի վրա հարձակվում են և որքան կարողանում են դրամ, ձի կամ պարեն են ձեռք բերում ու օրեցօր շատանում են: Կառուսականների գնդեր են հայտնվել Բիսկայայի և Հին Կաստիլիայի սահմաններին, Կարանցայի դաշտերում: Նրանց դեմ թագավորական զորք է ուղարկվել Բիլբաո, Սանդոնա և Լարետա քաղաքներից:

Ներկայումս կառուսականների առաջնորդը Բոգուիգան է, ով գտնվում է Ռիբասի կողմերում: Նա իր տրամադրության տակ ունի 300 կամավորներ, որոնք զբաղվում են գումար հայթայթելով, որպեսզի ապստամբությունը շարունակեն: Վերին Կատալոնիայում կառուսական գնդերի առաջնորդները Բ. Տրիստանիի ազգականներն են, որոնց պայքարը շարունակելու համար միայն դրամ է պակասում: Կառուսականներն առանց դժվարությամբ համալրվում են Էբրո գետի մոտ, նրանց առանձին ջոկատներ նկատելի են նաև բասկերի գավառներում: Կառուսականների և թագուհու զորքի միջև արյունահեղ կռիվ է եղել Բեքթուսում [15, 58]:

Իսպանիայի կառավարությունը Կատալոնիայի սահմանը Պիրենեյան լեռների և Ֆրանսիայի կողմից պաշարողական վիճակի մեջ հայտա-

րարեց, որպեսզի Ֆրանսիայի հետ հաղորդակցությունը և առևտուրն իրականացվի միայն Եունգուերայի մաքսատնով: Դրանով իշխանությունները ցանկանում են մոնտեմոլիստների հաղորդակցությունը Ֆրանսիայի հետ կտրել, որպեսզի նրանք չկարողանան զենք կամ պատերազմի համար հարկավոր այլ բաներ ձեռք բերեն [16, 66]:

Կատալոնիայից ստացված լուրերը, գրում է «Եվրոպան», «շատ անհաջող են»: Մոնտեմոլիստներն օրեցօր հզորանում են: Գեներալ Մանուել Կոնչան, ով 20 հազար զորքով առանց դժվարության Պորտուգալիայի լավ ամրացված Օպորտո քաղաքը գրավել էր, այժմ 5 հազար զորքով չի կարողանում հաղթահարել 5 հազար մոնտեմոլիստների դիմադրությունը [17, 83]: Գեներալ Մ. Կոնչայի զործողություններից չափազանց դժգոհ է կառավարության ղեկավար Ռ. Նարվաեսը: Նա Կատալոնիայում գերի ընկած կառլոսականներին գեներալ Մ. Կոնչայի հրամանով գնդակահարելը «տկարութիւն կարծեց», ուստի նոյեմբերի 3-ին գեներալ Մ. Պավիային ուղարկեց Կատալոնիա, որպեսզի Մ. Կոնչային պաշտոնանկ անի: Ռ. Նարվաեսը պաշտոնանկ արեց նաև Բուրգոսի կառավարիչ Կամիներոնին, որի փոխարեն նշանակեց Ֆրանչեսկո Ֆուլկոզիոյին [18, 90]:

«Եվրոպան», հղում անելով Պրուսիայի «Ընդհանուր լրագրին», գրում է, որ 1847 թ. նոյեմբերին Պերկա գյուղի մոտ սաստիկ կռիվ տեղի ունեցավ թագավորական զորքի և կառլոսականների միջև: Մոտ 60 կառլոսականներ սպանվել են: Բայց այդ կռուներից եկած ճամփորդների պատմելով թագուհու զորքը ետ է քաշվել ու փախել, իսկ կառլոսականները Պերկա գյուղի մոտ եղած ռազմական բոլոր ամրություններն ավերել են: Այս անհաջողության համար մեղադրում են գեներալ Մ. Կոնչային, ով Կուիգոնա փոքրիկ քաղաքում դիրքավորված կառլոսականների վրա հարձակվելու նպատակով իր հետ մեծ ուժեր տարավ և անպաշտպան թողեց Պերկայի շրջանը: Կառլոսականները, կռահելով գեներալի մտադրությունը, թագուհու զորքի դուրս գալուց հետո հարձակվեցին անպաշտպան գյուղի վրա: «Եվրոպան» կառլոսյան պատերազմի ամբողջ ընթացքը, տեղի ունեցած իրադարձությունը, կռիվներն ու բախումները ներկայացնում է անկողմնակալ դիրքերից և բավական զուսպ ոճով: Բայց այս անգամ թերթը շեղվում է իր ստանձնած ուղեգծից և գնահատական է տալիս թագավորական զորքի գեներալ Մ. Կոնչային: «Շատ ցավալի բան է», գրում է «Եվրոպան», որ գեներալ Մ. Կոնչան «իր այս պաշտոնը ասանկավ լրմնացուց» [19, 95]: Կառլոսականները, ստացված այլ լուրերով, հանկարծակի հարձակվել են թագուհու զորքի վրա նաև այլ վայրերում, որը 200

գոհ է տվել: Ընդհանրապես նկատելի է, որ կառուցասկանները «երթալով շատ կը զորանան ու շատ կը վախճուի որ Սպանիայի մէջ քաղաքացիական կռիւր նորէն սկսի», եզրակացնում է «Եվրոպան» [19, 95]:

«Եվրոպան» տեղեկացնում է, որ 27 կառուցասկաններ, ապավինելով թագուհու ներման հրովարտակին, վերադառնալով հայրենիք, կառավարության ղեկավար Ռ. Նարվաեսի հրամանով ձերբակալվեցին ու բանտարկվեցին: Կատալոնիայում գտնվող թագուհու զորքը մտավ Անդորրա չեզոք հանրապետություն և 7 անգէն կառուցական բռնեց, որոնց գէներալ Մ. Պավիան գնդակահարել տվեց: Նա վերացրեց Կատալոնիայի սահմանի պաշարումը գէներալ Մ. Կոնչայի կողմից, որը հնարավորություն տվեց ապրանքների ազատ մուտքն Իսպանիա [20, 3]: Ինչպէս երևում է, գրում է «Եվրոպան», Կատալոնիայում կառուցասկանների «բանը լըմնցած կ'երևայ»: Նոր կուսակալ Մ. Պավիան նրանց ամենուրեք ցրեց, որոնց ղեկավարները նորից փախչում են Ֆրանսիա: Նա մի հայտարարություն տարածեց, որով բոլոր կառուցասկաններին սպառնում է բանտարկությանը կամ մահվամբ, եթէ նրանց մոտ գէնք հայտնաբերվի [21, 14]:

1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության հաղթանակը կառույցյան պատերազմի օրերին լայն արձագանք գտավ իսպանական հասարակության առաջադեմ խավերի շրջանում: Դրանից անհանգստացած՝ կառավարության ղեկավար Ռ. Նարվաեսը փետրվարի 28-ին կորտեսներին օրինագիծ ներկայացրեց անձի անձեռնմխելիության մասին 1845 թ. սահմանադրության 7-րդ կետը կասեցնելու վերաբերյալ: Մարտի 18-ին սենատը հավանություն տվեց այդ օրինագծին, իսկ մարտի 22-ին Իզաբելլա II-ը կորտեսները ցրեց: Դա առաջ բերեց առաջադիմականների զայրույթը, որոնք Մադրիդում ապստամբություն բարձրացրին: «Եվրոպան» հանգամանորէն անդրադառնում է մարտի 26-ի ապստամբությանը, որն անվանում է «խռովություն»: Ըստ թերթի՝ զինված մարդկանց խմբերը մտան Մոլան դէ Կոնգրեսո, դէ լա Սեբադա, Պլացա մայոր, Պլացա դէ Սանտա Աննա հրապարակները, ապա հավաքվեցին մայրաքաղաքի Լավաբիես թաղամասում և սկսեցին գոռալ «կեցցէ ազատությունը», «կեցցէ սահմանադրությունը»: Ապստամբներից շատերը բացականչում էին «կեցցէ հանրապետությունը» կամ «կեցցէ Կառուս հինգերորդը», «կորչէն բռնավորները»: Լա Սեբադա հրապարակում զինվորները նրանց վրա կրակ բացեցին, որոնք համախմբվեցին Պուերտա դէ Մոլում, պատնէշներ կառուցեցին ու դիմադրություն ցույց տվեցին: Երկուստեք շատ կորուստներ ու վիրավորներ եղան, ի վերջո զինվորները հաղթեցին

և 300 ապստամբների բռնեցին ու բանտարկեցին: Ըստ թերթի տեղեկության՝ ապստամբության երևելիներն են կառավարության նախկին ղեկավար գեներալ Բ. Էսպարտերոյի օգնական Գանդարան, նախկին նախարար Էդոուարդիայի եղբայրը, Սոբրադոն և բանաստեղծ Աստուերինո եղբայրները: Ապստամբությունը ղեկավարում էին Կրեսպո և Ռոտա գեներալները: Նրանք հույս ունեին, որ «զինվորներից շատերն իրենց կողմը կ'անցնին, բայց շատ խաբուեցան» [22, 72]:

«Եվրոպան» բավականին հավաստի է ներկայացնում Մադրիդում տեղի ունեցած ապստամբությունը և դրա ղեկավարներին, որին մասնակցած 2 հազար քաղաքաբնակներից ու զինվորականներից 200-ը սպանվեցին և գրեթե նույնքան մարդ գերի ընկավ կառավարական զորքին: Կառավարությունը, մի կողմ թողնելով կառուսականների դեմ պայքարը, ուշադրությունը կենտրոնացրեց Մադրիդի անվտանգությանը, որի կայագործի թիվը հասցրեց 20 հազարի, իսկ մարտի 28-ին ձեռքակալեց 900 մարդ, որոնց աքսորեց Ֆիլիպիններ և Կանարյան կղզիներ [7, 337-339]: Ապստամբության ճնշումից օրեր անց «Եվրոպան» գրում է, որ Մադրիդում «խաղաղութիւն նորեն վրդովել է կառավարութեան անխոհեմ հրամանի» պատճառով, ոստիկանությունը փակել է Մադրիդի համալսարանը և արգելել ուսանողների մուտքը: Խռովություն է սկսել Բարսելոնայի համալսարանում, որտեղ ուսանողները բացականչել են «կեցցե հանրապետությունը»: Զինվորները նրանց վրա գենք են կիրառել, մեկ կին մահացել է, մի քանիսը վիրավորվել են [23, 91]:

«Եվրոպան» նկատի ունի ապրիլի 2-ի ուսանողական ընդվզումը Մադրիդի համալսարանում, Սան Կառլոս քոլեջում և մարտի 29-ի ապստամբությունը Բարսելոնայում, որոնք զորքը ճնշեց: Չնայած կառավարության կոշտ պատժամիջոցներին՝ Մադրիդում 1848 թ. մայիսի 7-ին նոր ապստամբություն սկսեց, որը գլխավորում էին լիբերալ գործիչ Խոսե լա Մալամանկան և նրա շուրջը համախաբված մարտի 26-ի ապստամբության կազմակերպիչ Գանդարան, սպաներ Բեդոյան, Բուսետան և ուրիշներ [7, 339]:

Դրան անդրադարձած «Եվրոպան» պատմում է, որ մայիսի 6-ի երեկոյան Մադրիդում իրենց զորանոցներում ապստամբեցին Եսպանա գնդի երկու ջոկերը: Նրանք զինաթափեցին իրենց հրամանատարներին և մի քանի քաղաքացիների առաջնորդությամբ գնացին Մեծ հրապարակը, որտեղ զինվորները նրանց վրա կրակ բացեցին: Մայիսի 7-ի առավոտյան ժամը 5-ին զորքը փակեց Մեծ հրապարակ տանող երկու փողոցները և

հարձակվեց ապստամբների վրա: Ապստամբ զինվորները, որոնք ընդամենը 300 հոգի էին, դիմադրություն ցույց տվեցին, բայց կորուստներ ունեցան ու անձնատուր եղան: Սկզբում նրանք ժողովրդին իրենց կողմը գրավելու նպատակով բացականչում էին «կեցցե թագուհին», «կորչեն նախարարները», բայց հետո սկսեցին գոռալ «կեցցե հանրապետությունը», «կեցցե ազատությունը»: Դրանից «ժողովրդեան աչքը բացուեցաւ, ու սկսան. Աս չէ, աս չէ, դէպ ի տուն, դէպ ի տուն կանչել ու ցրուիլ»: Այսպես, մնալով միայնակ, ապստամբ զինվորներից շատերը զոջացին իրենց արածի համար և անձնատուր եղան [24, 96; 25, 99]:

«Եվրոպայի» տեղեկությունը հավաստի է. ապստամբության 300 մասնակիցները բացառապես զինվորականներ էին, որոնք ազատություն էին պահանջում, բայց միաժամանակ ողջունում էին թագուհուն: Թագավորական զորքը գեներալ Լարսունդի հրամանատարությամբ արագ ճնշեց ապստամբությունը, իսկ Մադրիդի զինվորական նահանգապետ կապիտան-գեներալ Պեսուելան դաժան հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ: Մարտի 26-ի ապստամբությունը ճնշած գեներալ Բալբոայի գլխավորությամբ ստեղծված ռազմական դատարանի վճռով 13 դատապարտյալ զինվորականներ մայիսի 8-ի գիշերը գնդակահարվեցին Ալկալա նավահանգստի շրջակայքում հավաքված զինվորական կայազորի ներկայությամբ: 700 մարդ արտաքսվեց Բալեարյան կղզիներ ու գաղութներ: Ապստամբություն տեղի ունեցավ նաև «Ֆիգարո» ռազմանավում, որի մասնակիցներից երեքը սպանվեցին, իսկ վեցը գնդակահարվեցին [7, 339-340]:

«Եվրոպան» անդրադառում է նաև 1848 թ. մայիսի 13-ին Սևիլիայում Գվադալախարայի գնդի ջոկատներից մեկի ապստամբությանը, որի մասնակիցները վանկարկում էին «կեցցե հանրապետությունը»: Թագուհու հավատարիմ զորքը նրանց պարտության մատնեց ու քշեց դեպի Պորտուգալիայի սահմանը: Այս գնդի հրամանատար Խոսե Պորտալն անգլիական դեսպանատան հետ կապ ունեցող մի տիկնոջ մերձավոր ազգականն էր, ուստի կասկածեցին, որ այս ապստամբությունը գրգռել է դեսպանատունը: Այդ պատճառով իշխանությունները Անգլիայի դեսպան Շենրի Բուվերին հանձնեցին նրա անձնագիրն ու պահանջեցին 48 ժամվա ընթացքում Մադրիդից հեռանալ: «Եվրոպայի» կարծիքով «Այս պատճառը այնչափ հաւանական չէրևար, բայց ինչ որ է ն՛ է՛ ժամանակաւ անտարակոյս կ'իմացուի» [26, 107]:

Իրականում Իսպանիայում ապստամբական խմբի հրամանատար

Խ. Պորտալը դեսպան Հ. Բուլվերի ընկերն էր, ում կառավարության ղեկավար Ռ. Նարվաեսը կասկածում էր ապստամբություն հրահրելու մեջ, ուստի նրան առաջարկեց լքել Մադրիդը: Խ. Պորտալն իր գնդով Սևիլիայից շարժվեց դեպի Ռելվե, որտեղ նրա վրա հարձակվեց գեներալ Շելլին ու հարկադրված եղավ նահանջել Սևիլիա: Չնայած դրան՝ Խ. Պորտալը որոշեց չջարունակել ապստամբությունը և անցավ Պորտուգալիայի սահմանը [7, 340]:

Մուգսբուրգի «Ընդհանուր լրագրի» տեղեկություններով «Եվրոպան» գրում է, որ Իսպանիայի կառավարության ղեկավար Ռ. Նարվաեսը կառուսականներին խոստացել է առաջիկայում Ազգային ժողովը բացվելուն պես առաջարկություն անել սալիչյան օրենքը նորից հաստատելու համար: Այս օրենքը պետք է ուժի մեջ մտնի Իզաբելլա թագուհու մահվանից հետո, որով ոչ թագուհու ամուսինը, ոչ նրա եղբայրը, ոչ դքսուհի Մոնպանսինեն և ոչ էլ կոմս Մոնտեմոլիմը չեն կարող ստանձնել Իսպանիայի թագը: Կառուսականներից ոմանք, հավատալով Ռ. Նարվաեսի անկեղծությանը, վտարանդիությունից վերադարձան Իսպանիա: Նրանց խոսքերից այնպիսի տպավորություն է ստեղծվում, գրում է լրագիրը, որ միտք չունեն որոշակի իշխանություն ձեռք բերելուց հետո սպասել Իզաբելլա II-ի մահվանը, որպեսզի դոն Կառլոսի ժառանգները գահ ստանան: Նրանք ավելի շատ հակված են իրենց «իրավունքը որչափ կարելի է շուտով պաշտպանելու», բայց տարակուսում են, թե արդյո՞ք Ռ. Նարվաեսը «իրենց բաղձանացը աս վերջին սահմանը հասնելու ձեռք պիտի բռնե թե չէ» [28, 134]:

Կառուսականները նման կասկածներ ունեին և վստահ չէին, որ Ռ. Նարվաեսը կկատարի իր խոստումը: Բանն այն է, որ 1848 թ. ամռանը իսպանական գրանդները Ռ. Նարվաեսին ուղերձ էին հանձնել և վստահեցրել, որ պատրաստ են նրա տրամադրության տակ դնել իրենց ունեցվածքը և անգամ կյանքը՝ ժողովրդական զանգվածների դեմ պայքարում: Հանրապետական Ֆրանսիայում աշխատավորների առաջ քաշած պահանջների մասին լուրերը խիստ մտահոգում էին Ռ. Նարվաեսի կառավարությանը, որի քաղաքական հենարան համարվող աջ ուժերը գնալով ավելի ու ավելի էին հակվում դեպի բացարձակապետությունը: Այդ պատճառով Իզաբելլա թագուհին և Ռ. Նարվաեսը շտապում էին հնարավորինս արագ ընկճել կառուսականների դիմադրությունը:

«Եվրոպայի» ստացած տեղեկություններով՝ 1848 թ. օգոստոսին կառուսականները նորից սկսել են ոտքի ելնել: Նրանց հրամանատարներ

Ֆորգատելը և Առնավը 5 հետևակ և 50 հեծյալ զինվորներով մտել են Կաստելանի գավառը ու գրավել Լուչենա քաղաքը, որը ժամանակին կառլոսականների դեմ գորավոր պատվար էր: Իսպանիայի տարբեր կողմերում, հատկապես անառիկ լեռնային վայրերում պարբերաբար խռովարարներ են հայտնվում [29, 165]: 1848 թ. աշնանը «Եվրոպան» գրում է, որ Կատալոնիայում Ռեուս գավառը քաղաքացիական պատերազմի կենտրոն է դարձել: Ներկայումս ապստամբական խմբերը փոքր չեն, այլ բազմաթիվ վաշտեր, որոնք հարձակվում են թագուհու գործի վրա և կուրուստներ պատճառում: Օրերս 300 կառլոսականներ և նույնքան հանրապետականներ Վիլելայի գլխավորությամբ թագուհու գործին ետ քշեցին մինչև Պիսպալ:

Այսպիսի դեպքեր տեղի են ունեցել նաև Արագոնայում: Պաշտոնական ծանոթագրությամբ սեպտեմբերի դրությամբ Կատալոնիայում 5-6 հազար զինված կառլոսականներ կան: Կառավարությունը Կատալոնիայի զինվորական հրամանատար գեներալ Մ. Պավիային ցանկանում է ետ կանչել, բայց նրան փոխարինող հարմար զինվորական չի գտնում: Սեպտեմբերի 1-ին Մադրիդից 3 հազար զինվոր ուղարկվեց Կատալոնիա, որոնք, թերթի կարծիքով, «դժվարաւ ապստամբները պիտի նուաճեն» [30, 178]:

1848 թ. կառլոսականների ապստամբությունները Նավարրայում, Էստրեմադուրում, Անդալուսիայում և Սանտանդերում անհաջող վախճան ունեցան: Չնայած դրան՝ գեներալ Ռամոն Կարբերան կարողացավ Կատալոնիայում հավաքել 5-6 հազար մարդ և դիմադրել թագավորական գործին [4, 353]:

Այս իրողությունը նկատի ունենալով՝ «Եվրոպան» գրում է, որ 1848 թ. սեպտեմբերի 23-ին Բարսելոնայից ստացված լուրերով կառլոսականների հրամանատարներ Կարբերան, Էստավրուսը, Բլանտեմանդը, Մարտակադալը և հանրապետականների շատ առաջնորդներ Վիտրայի ու Մոնտեստուիների մոտ պետք է միավորվեն իրենց տրամադրության տակ եղած գործով: Իսպանիայում կառլոսականներ ու հանրապետականները «միավորվել են թագուհու իշխանութեան դեմ»: Վերը նշված վայրերում ձի և գումար են պահանջում, որպեսզի կարողանան կռվել: Կառլոսականների գնդերը Անսոյում հանկարծակի հարձակում կատարեցին ու իրենց ուզածին հասնելով՝ ետ դարձան [31, 211]:

Կատալոնիայում կառլոսականները Ռ. Կարբերայի հրամանատարությամբ կռվեցին մինչև 1849 թ. հունվարի 7-ը: «Եվրոպայի» ստացած

տեղեկություններով այդ օրերին Կատալոնիայում թագուհու զորքերի հրամանատար Ֆ. Կորդովան հրաժարական տվեց, նրա փոխարեն նշանակվեց գեներալ Մանուել դե լա Կոնչան: Ըստ թերթի՝ նրա հրաժարականի պատճառը կառուսականների տարած հաղթանակն է, որոնք 200 հոգով հարձակվեցին թագավորական 800 զինվորների վրա ու «շատ ջարդ տվեցին», նրանց հրամանատար Մանցանոյին գերեցին ու սպանեցին: «Եվրոպայի» տպավորությամբ այս հաղթանակից կառուսականները շատ են ոգևորվել և օրեցօր ավելանում են: Այդ պատճառով կառավարությունը մտադիր է Կատալոնիայում զորքի թիվը հասցնել 20 հազարի [32, 4]:

«Եվրոպայի» ունեցած տեղեկություններով՝ 1849 թ. մարտի դրությամբ կառուսականները բավական հզորացել են Գրանադա, Անդալուսիա, Կորդովա և Կատալոնիա նահանգներում: Նրանք տարբեր վայրերում անսպասելի հարձակումներ են գործում և հափշտակություններ կատարում: Կառավարությունը նրանց դեմ զորք ուղարկեց, մի քանի տեղերում հաղթեց ու ցրեց: Չնայած դրան՝ թագավորական զորքը Կատալոնիայում կառուսականների հետ սաստիկ կռիվների մեջ է [33, 76]:

«Եվրոպայի» ստացած լուրերը 1849 թ. գարնանը կառուսականների հաղթանակների մասին խաբուսիկ էին, որովհետև ապրիլի 23-ին գեներալ Ռ. Կաբրերան Պաստերալեի կռվում վիրավորվեց ու չկարողացավ պայքարը շարունակել: Կառուսականների պարտությանը «Եվրոպան» արձագանքում է բավական զուսպ և կցկտուր տեղեկությամբ: Թերթը հայտնում է, որ 1849 թ. ապրիլին կառուսականները տարբեր տեղերում «դարձյալ հնազանդվել են», որոնց հրամանատարներից մի քանիսը գերի են ընկել ու գնդակահարվել: Իզաբելլա թագուհին գերեվարված կառուսական գեներալ Մարսալին, ով Կաբրերայից հետո երկրորդ դեմք է, կյանք է շնորհել [34, 87]: Իսպանական պաշտոնական լրագրերը, գրում է «Եվրոպան», հաստատում են 1849 թ. ապրիլին տարածված լուրերն այն մասին, որ կառուսականների հրամանատար գեներալ Ռ. Կաբրերան թագուհու զորքից «չարաչար պարտություն է կրել», փախել Ֆրանսիա և ձերբակալվել: Բայց այլ աղբյուրներից ստացված լուրերը չեն հաստատում Ռ. Կաբրերայի պարտությունն ու փախուստը: Դրանք հայտնում են, որ նա Ֆրանսիայի սահմանն անցել է գումար ձեռք բերելու նպատակով և ապստամբությունը շարունակելու, որտեղ և ձերբակալվել է [35, 92]:

Իրականում իսպանական պաշտոնական լրագրերը իրավացի էին. 1849 թ. մայիսին Ռ. Կաբրերան հարկադրված անցավ Ֆրանսիա, այնուհետև տեղափոխվեց Անգլիա, որտեղ անցկացրեց կյանքի մնացած տարի-

ները: Ֆրանսիական իշխանությունները դոն Կառլոս կրտսերին թույլ չտվեցին անցնել սահմանը: Հուլիսի 9-ին կառլոսյան երկրորդ պատերազմն ավարտվեց, և համընդհանուր ներում շնորհվեց պատերազմի մեջ ներքաշված բոլոր մարդկանց [4, 353]:

«Եվրոպան» հայտնում է, որ 1849 թ. օգոստոսին Իզաբելլա թագուհին պարտություն կրած կառլոսականներին ներում շնորհելու ժամկետը երկարացրեց 20 օրով: Կառլոսականների ղեկավարներից մոտ 50 հոգի իրենց հպատակությունը հայտնեցին թագուհուն, ով նրանց զինվորական կոչումները նորից հաստատեց: Շատ կառլոսական զինվորներ ու պաշտոնյաներ ներկայացան թագուհուն և շնորհակալություն հայտնեցին իրենց ներում շնորհելու ու պաշտոններում վերահաստատելու համար [36, 183]:

Իզաբելլա թագուհին կառլոսյան երկրորդ պատերազմում հաղթանակ տարավ և պահպանեց իր գահը, բայց 1868 թ. սկսված կառլոսյան երրորդ պատերազմի ժամանակ հարկադրված եղավ 1870 թ. հունիսի 25-ին Փարիզում պաշտոնապես հրաժարվել գահից՝ հօգուտ իր զավակ դոն Ալֆոնսոյի, ով գահին անցավ միայն 1875 թ. հունվարին [5, 381; 6, 152; 4, 366]:

Եզրակացություն

Կառլոսյան երկրորդ պատերազմը լայն արձագանք գտավ «Եվրոպա» շաբաթաթերթում, որը բազմաթիվ հրապարակումներում անդրադարձավ այս թեմային: Թերթը պարբերաբար լուսաբանեց պատերազմի ամբողջ ընթացքը՝ անդրադառնալով գրեթե բոլոր կարևոր կռիվներին ու ընդհարումներին: Պարբերականը ջանում էր դրանց մասին հաղորդել հավաստի և ճշգրիտ լուրեր՝ ընդամին պահպանելով անկողմակալություն: «Եվրոպան» պատերազմի վերաբերյալ դիրքորոշում չի արտահայտում՝ հավատարիմ մնալով Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները չեզոքության, անաչառության և հավաստի ներկայացնելու ստանձնած պարտավորությանը:

Գրականության ցանկ

1. Գալեմբեարեան Գ., Պատմութիւն հայ լրագրութեան, Վիեննա, 1893:
2. Կարինյան Ա., Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երևան, 1960:
3. Испанские короли. Под ред. В. Л. Бернекера и др. Пер. с исп., Ростов-на-Дону, 1998.

4. История XIX века. Под ред. Лависса и Рамбо. т. 3, М., 1938.
5. История Испании. От войны за испанское наследство до начала XXI века. Ред. кол. О. В. Волосюк и др. т. 2, М., 2014.
6. Майский И. М. Испания. 1808-1917, М., 1959.
7. Революции 1848-1849. Под ред. Ф.В. Петемкина и А.И. Молока, т. 2, М. 1952.
8. «Եվրոպա», 1847, 6 հուլիսի, N 2:
9. «Եվրոպա», 1847, 13 հուլիսի, N 3:
10. «Եվրոպա», 1847, 20 հուլիսի, N 4:
11. «Եվրոպա», 1847, 3 օգոստոսի, N 6:
12. «Եվրոպա», 1847, 17 օգոստոսի, N 8:
13. «Եվրոպա», 1847, 31 օգոստոսի, N 10:
14. «Եվրոպա», 1847, 14 սեպտեմբերի, N 12:
15. «Եվրոպա» 1847, 5 հոկտեմբերի, N 15:
16. «Եվրոպա», 1847, 19 հոկտեմբերի, N 17:
17. «Եվրոպա», 1847, 16 նոյեմբերի, N 21:
18. «Եվրոպա», 1847, 30 նոյեմբերի, N 23:
19. «Եվրոպա», 1847, 7 դեկտեմբերի, N 24:
20. «Եվրոպա», 1848, 4 հունվարի, N 1:
21. «Եվրոպա», 1848, 18 հունվարի, N 4:
22. «Եվրոպա», 1848, 25 ապրիլի, N 17:
23. «Եվրոպա», 1848, 23 մայիսի, N 21:
24. «Եվրոպա», 1848, 30 մայիսի, N 22:
25. «Եվրոպա», 1848, 6 հունիսի, N 23:
26. «Եվրոպա», 1848, 20 հունիսի, N 25:
27. «Եվրոպա», 1848, 27 հունիսի, N 26:
28. «Եվրոպա», 1848, 1 օգոստոսի, N 31:
29. «Եվրոպա», 1848, 26 սեպտեմբերի, N 39:
30. «Եվրոպա», 1848, 17 հոկտեմբերի, N 42:
31. «Եվրոպա», 1848, 19 դեկտեմբերի, N 51:
32. «Եվրոպա», 1849, 2 հունվարի, N 1:
33. «Եվրոպա», 1849, 8 մայիսի, N 19:
34. «Եվրոպա», 1849, 29 մայիսի, N 22:
35. «Եվրոպա», 1849, 30 հոկտեմբերի, N 44:
36. «Եվրոպա», 1849, 6 նոյեմբերի, N 45:

Реакция на вторую карлистскую войну в еженедельной газете «Европа»

Мовсисян Феликс

Резюме

Ключевые слова: Испания, престолонаследие, Фердинанд VII, Изабелла II, Наварра, карлисты, Каталония, Кабрера

В 1846-1849 годах в Испании развернулась борьба за престолонаследие, известная как Вторая карлистская война. Еженедельная газета «Европа», представляющая армянское национально-консервативное течение, обязалась правдиво и достоверно отразить это европейское политическое событие, не приукрашивая и не искажая его. Придерживаясь этого курса, редакторы «Европы» представляли борьбу за испанский трон с максимально нейтральной и беспристрастной позиции. Мхитаристам была хорошо известна история Испании начала XIX века, которая после смерти короля Фердинанда VII стала ареной гражданской войны между законной королевской властью и сторонниками брата короля дона Карлоса, также претендовавшего на престол. Последних мхитаристы по праву называли карлистами, воюющими против королевы Изабеллы II и ее правительства. Весь ход Второй карлистской войны мхитаристы обстоятельно освещали, проявляя достаточную осведомленность прежде всего на основе публикаций европейской прессы и новостей, полученных из различных источников. Редакция «Европы» не отличалась придирчивостью и не делала различий между полученными новостями и публикациями в прессе. Они использовали как официальные новости и публикации, так и неофициальные и даже независимые источники информации. Газета старалась дать как можно больше информации о войне, поэтому не довольствовалась только новостями из Испании, но в равной степени использовала публикации прессы других европейских стран. «Европа» отмечала, что в 1848 г. под влиянием победы Февральской французской революции активизировались военные действия карлистов в Каталонии, в результате чего они одержали ряд побед. Газета представляла достоверные сведения о командирах и генералах как карлистских, так и монархических полков и сдержанно рассказывала об их победах. В некоторых случаях газета подчеркивала мужество или неудачу этих воинов. «Европа» не хвалила их за победы и не критиковала за поражения, а преподносила все как реальность и свершившиеся события. Газета рассказывала о всех сражениях, даже о незначительных стычках и жертвах, не оказавших существенного влияния на ход

войны. Периодическое издание характеризовала многие столкновения между конфликтующими сторонами как «ожесточенные» или «кровавые бои». «Европа» не скрывала и не игнорировала тот факт, что карлисты иногда прибегали к мародерству для получения оружия и боеприпасов или заставляли местные власти выделять на эти цели деньги. Характеризуя испанские события как борьбу за престолонаследие, «Европа» в то же время отмечала, что в стране идет гражданская война. Газета не выражала позицию по поводу окончания войны, а довольствовалась констатацией того, что побежденные карлисты были помилованы королевой. Некоторые из них подчинились Изабелле II, сохранив воинские звания и должности.

Reaction to the Second Carlos War in the “Europe” Weekly Newspaper

Movsisyan Felix

Summary

Key words: *Spain, succession, Ferdinand VII, Isabella II, Narváez, the Carlosians, Catalonia, Cabrera*

In 1846-1849, a struggle for the succession to the throne took place in Spain, which is known as the Second Carlos War. The "Europe" weekly newspaper, representing the Armenian national-conservative current, reacted to it in time, and was obliged to present the European political transition truthfully and reliably, without coloring or distorting them. Adhering to this assumed commitment, "Europe"'s editors present the struggle for the Spanish throne from a possibly neutral and impartial position. The Mkhitaryans were well aware of the history of Spain at the beginning of the 19th century, which, after the death of King Ferdinand VII, saw a civil war in Spain between the legitimate royal authority and supporters of the king's brother don Carlos, who claimed the crown. The Mkhitaryans rightfully call the latter Carlosians, who are fighting against Queen Isabella II and her government.

The Mkhitaryans present the entire course of the Second Carlos War thoroughly, with sufficient awareness, mainly on the basis of European press publications and news received from various sources. The editors of the "Europe" were not meticulous and did not distinguish between the received news or press publications. They use both official news and publications, as well as nonofficial and even independent sources of information. The newspaper tries to give as much information about the war as possible, that's why it

equally uses the news from Spain and press publications of other European countries.

The "Europe" notices that in 1848, under the influence of the victory of the February French Revolution, the military operations of the Carlosians activated in Catalonia, due to which they won a number of victories. The newspaper presents the commanders and generals of both the Carlosians and the monarchists with reliable information, and tells about their victories in a restrained style. In some cases, the newspaper highlights the courage or failure of those soldiers. The "Europe" does not praise them for their victories or criticize them for their defeats, but presents them as a reality, an event that happened. The newspaper delineates about all the battles, even minor conflicts that did not have a significant impact on the course of the war. The periodical characterizes many of the conflicts between the fighting parties as "severe" or "bloody fighting".

The "Europe" does not hide or ignore the fact that the Carlosian squads sometimes resorted to looting in order to obtain weapons and ammunition, or forced local authorities to allocate money for that purpose.

Describing the Spanish events as a struggle for the succession, the "Europe" stated the fact that a civil war was taking place in the country. The newspaper did not express a position regarding the end of the war, but it stated that the defeated Carlosians got royal pardons. Some of them obeyed Isabella II and kept their military ranks and positions.

Ներկայացվել է 14.10.2022 թ.
Գրախոսվել է 10.11.2022 թ.
Ընդունվել է տպագրության 25.11.2022 թ.